

ախորժելի են, թէպէտ և մեզի համար նյն մերձաւոր յարաքերութիւններն ըւնենան: Հոմերոս երբ ուզէ՝ լիստորի համոզողական ճարտասանութիւնը նկարագրել, կ'ըսէ՝ թէ Մեղրի պէս խօսեց բերնեն իւ ծառալին. թէպէտ և ուրիշ տեղ ալ կ'ըսէ՝ որ Վրեծինդրութիւն էլլուն աւելի քաղցր է: Պլատոնի համար ալ կը պատմեն՝ թէ խանձարրոց մէջ քուն ըլլալու ժամանակ՝ բերնին վրայ մեղուներ հանգելով, գուշակեցին որ օր մը անուանի քաղցրախօս ճարտասան մը պիտի ըլլայ: Անուկն Պիհնդարոս՝ ծնողացմէ մրտենեաց Ճիւղերու վրայ ձգուած ըլլալով, մեղուները զինքը սնուցին, կ'ըսեն, կաթի տեղ մեղը ջամբելով: Լոյն բանը նաև Դաքնիսի, և ուրիշ մեծամեծ քերդողաց համար ալ կը պատմուի: Քսենոփոն իր ոճոյն քաղցրութեանն ու վայելքաբանութել համար՝ Մեղր աւելնացոյ կոչուեցաւ:

Հին նկարի մը մէջ, լոգարանի մը

կամ յաւերժահարսանց պաշտամանցը նուիրեալքարայրի մը մուտքին վրայ մեղու մը նկարուած էր. անշուշտ պատկերահանը անով կ'ուզէ իմացընել թէ ինչպիսի զգուշութք պէտք է այն սըրբանուեր տեղերէն պղծագործ մարդիկն հեռացընել, ինչպէս որ ժիր մեղուն ապականիչ միջատներն իր փեթակէն դուրս կը հալածէ:

Ո՞եղուն Հոովլմայեցւոց մէջ՝ չարագուշակ կը սեպուեր, և ընդ հակառակն բէովտացւոց և ատտիկեցւոց մէջ բարեգուշակ: Պլուտարքոս Իրուտոսի վարքին մէջ կ'ըսէ թէ գործողութեան մը սկիզբը մեղուաց երենալը ձախորդութեան նշան էր: Ի՞նոր համար Իպափիանոս մասնաւոր կը յիշատակէ թէ այն պատերազմին նախընթաց օրն որ Պոմպէոս Փարսալիոյ մէջ յաղթուեցաւ ու փախաւ, մեղուաց խումբ մը բագնաց վրայ ժողվուած էին:

ԱԳՈԱԻՆ ՈՒ ԱՂՈՒԵՍ

Ոստի մը ծայր
Պարոն ագռաւն էր թառեր.
Ինքանն աւար
Պաղցած պանրի կտոր մ'ունէր:
Հոտը կ'առնու
Ազուեսը վեր վեր կ'ինայ.
Ինուշ լեզու
Կու գայ վարէն ձայն կու տայ.
Իարե, բարե,
Պարոն ագռաւ,
Վեղ շատ արե.
Ո՛հ, ինչ աղւոր
Ինչ գեղեցիկ
Ես իրաւ որ:
Ուտ ընկարծես,
Ուէ ձայնդ ալ է
Աս տեսքիդ պէս,
Դառն մէկ հատիկ
Ինտափս մէջ հիւր հաւերուն ես փիւնիկ:
Ի՞ր լսելով խընտումէն
Ի՞ելէ ագռաւն ինքիրմէն.

Կըտուց մը լայն կը բանայ
 Որ անուշ ձայնը ձըգէ .
 Որսը թերնէն վար կ'իյնայ .
 Շզուէսն իսկըն կը խըլէ ,
 Օ այս ըսելով իրեն հոն .
 Ո'իամիտ Պարոն ,
 Գլընա խելք սովորէ .
 Ո'մէն շողոքորթ կ'ապրի անոնցմէն
 Որոնք կը խաբուին իր անուշ լեզուէն .
 Ո'ս դասն որ հիմա դու ինծմէ առիր ,
 Ո'արժէ , խօսք չըկայ , կըտոր մը պանիր :
 Ո'գուաւն ամօթով
 Ո'ըրտին երուքով
 Ո'յրում կ'ընէ հոն , թէպէտ քիչ մը ուշ ,
 Ո'էյմ'ալ չաւտալու լեզուաց փաղաքուշ :

ԱՖՈՆԴԻՆ

Հիշտանպուրի պալատը :

Ո հւքսանսպուրի պալատն իր պարտէ զներովը միատեղ առած՝ Դիմիլիլուին վերջը Վաղղիոյ ամենէն ընդարձակ , փառաւոր ու նորակերտ պալատն է : Իր շինուած տեղը առաջ Հռովմայեցոց բանակատեղի մըն էր , վերջէն իբրև աննշան տեղ մը երեսի վրայ մնացած էր անանկ որ երբեմն անգործ ու յետոյ մշակեալ , երբեմն բնակութք ընցուած ու վերջէն անապատացեալ տեղ մը եղած է , ինչպէս որ կը պատահի ընդհանրապէս մեծ քաղաքներուն չորս բոլորը եղած երկիրներուն . վասն զի Ժ. Օ. դարուն վերջերը որոշուեցաւ հոն պալատ մը շինուելու : Ո'ոպէր-տը-Հարլէյ-տը-Սանսի , ամենէն առաջ հոն պալատ մը կանգնել տուաւ , ու շինելէն վերջը Աքինէյ- Ո հւքսանսպուրի դքսին ընծայեց , որն որ շատ մեծցուց ու գեղեցկացուց զայն . և իրեն անուամբը ինչուան հիմա Ո հւքսանսպուր կը կոչուի : Ո'արիամ Ո'էտիչ Հենրիկոս Դին այրի կինը ու Ո ուգովիկոս Ժ. Դին մայրը գնեց իրմէ ան պալատն իր բոլոր երկիրներովը : (1612) Ո'արիամ Փլորենտիա ծնած ու մեծցած ըլլալով ուզեց որ իր շինելու պալատն՝ յիշեցընէ իրեն իր

ծննդեան երկիրը . որով իր Հակոբ տէ Պիռոս Ճարտարապետին յանձնեց որ շինուելու պալատը փլորենտիան Ճաշակով ըլլայ : Տէ Պիռոս թագուհւոյն փափաքը կատարել ուզելով , Փլորենտիոյ Շիդդի ըսուած պալատին օրինակին վրայ շինեց իր յատակագիծը . Ո'արիամ Խտալիոյ , Գերմանիոյ և ուրիշ մեծ քաղաքաց երևելի Ճարտարապետներուն կարծիքն ալ առաւ , և անոնց միաբերան հաւանութիւնն առնելէն վերջը հրամայեց որ սկսի պալատին շէնքը : (1615)

Ո հւքսանսպուրի պալատը մասնաւորապէս նշանաւոր է իր համեմատութեանցը գեղեցկութեամբն , իր Ճիշդչափակցութեամբը և կատարեալ կանոնաւորութեամբն . բայց շիտակն ըսելով ահեղ գեղեցկութեանը պատճառաւ , վայելչութիւնն ու փափկութիւնը պակաս է : Ո'ս պալատիս գետնայարկը տոսկանեան Ճարտարապետութք շինուած է , առաջին յարկը դորիկեան և երկրորդը յոնիական . ասոնք մէկմէկէ հեռու են 60 գրկաշափ զուգահեռական միջոցով մը : Իր ամէնէն գեղեցիկ կողմը՝ Ո ուլինոն փողոցին վրայ եղածն ու քաղքին կողմի երեսն է : Իր երկու կողմը մեծամեծ վրանաձեւ շինուածքներ կան ու մէջտեղն ալ գմբե-